ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով մեկ անձից գնման միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30.11.2017թ.

ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ ԳԱՊ գնահատման պատասխանատու

Խ. Կարապետյան - ՀՀ ՏՄՊՊՀ նախագահի խորհրդական

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԳԱ-գնահատող անձնակազմ

Վ. Աբրահամյան ՀՀ ՏՄՊՊՀ աշխատակազմի ՎՄԳ վարչության պետի տեղակալ 2-րդ բաժնի պետ

Թ. Զուլալյան - ՀՀ ՏՄՊՊՀ աշխատակազմի ՀՑ ադմինիստրատոր և SS համակարգող

Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ ԲԱ-բացող անձնակազմ

Գ. Մկրտչյան - ՀՀ ՏՄՊՊՀ շենքի շահագործման աշխատանքները համակարգողի տեղակալ

Գ. Խուդավերդյան - ՀՀ ՏՄՊՊՀ աշխատակազմի ՎՎ ԱՄՎԲ առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ ՄՀՄ

Տ. Սաֆարյան – ՀՀ ՏՄՊՊՀ աշխատակազմի ՎՄԳ վարչության փորձագետ

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ

(Խ. Կարապետյան)

1. Ընդունել ի գիտություն, որ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով՝ հարցում էր ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի և մասնակիցների հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 2017 թվականի նոյեմբերի 27-ին ներկայացվել է եզրակացություն համաձայն, որի 1-ին տեղ զբաղեցրած «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (22.11.2017թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 165 760 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

1.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ և 45-րդ կետերը, «ՀՀ ՏՄՊՊՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/1» ծածկագրով մեկ անձից գնման միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց.

- մերժել մասնակցի հայտը և գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:
- լիազորված մարմին ներկայացնել «Ֆրիդոմ Դեվելոփմենթ» ՓԲԸ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում տեղեկագրում հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Խ. Կարապետյան

Անդամներ՝ _____ Գ. Խուդավերդյան

_____ Թ. Զուլալյան

_____ Գ. Մկրտչյան

_____ Վ. Աբրահամյան

Քարտուղար՝ _____ Տ. Սաֆարյան